առնէր խսկ արդեօք դիւրաւ վախճան պատերազմին, թէ տեւէր 'ի պաշարմանն. մանաւանդ զի երկպառակեալ եւ վհատեալ իմն էին խռովիչքն։ Այլ յանկարծ եբարձ նա զպաշարումն, եւ դարձ նորա նման իմն էր փախստեան. եւ խռովչացն միւսանգամ քաջալերեալ եւ զհետ մտեալ հալածէին զնա, մինչեւ գիշերայն ապրէր զօրավարն յետ անկանելոյ 'ի բանակէ նորա 5300 արանց, 980 երիվարաց եւ մեքենայից։ Ապա յայտնի եղեւ թէ տեւական է պատերազմն, յայն սակս բազումք յերեւելեաց և 'ի մտացեացն Հրէից մեկնեցան 'ի քաղաքէն, իբր 'ի նաւակէ որ մերձ է յընկղմիլ, ընդ որս եւ քրիստոնեայք որպէս ասացաք. եւ մնացեալքն 'ի Հրէից պատրաստէին 'ի պատերազմ։ Վիսպազրին Յովսէպոսի յանձն եղեւ Գալիլեա, Եղիազարու Եդովմ, և այլ ոմն Յովսեպոս և Անանոս քահանայապետ՝ կացին հրամանատարք յԵրուսաղէմ։

Հրէայք երկիցս յարձակեցան յԱսկալոն և մերժեցան յետս կորուսեալ զարս 20,000։ Վէսպասիանոս զօրավար ժողովէր գունդ հարուստ յԱսորիս, եւ սկիզբն 67 ամին հասանէր առաջի Յոդապատայ 'ի Գալիլեա 60,000 արամբ, և Տիտոս որդի նորա խառնեցաւ 'ի նա։ Աւուրս 47 դիմակալ եղեւ պաշարման քաղաքին Յովսեպոս մեծաւ քաջութեամբ. բայց առաւ յարձակմամբ եւ ապականեցաւ հրով և սրով։ Ընդ գերեալսն էր և Յովսեպոս՝ զոր կամէր զօրավարն առաքել առ Կայսր, բայց իբրեւ պատմեաց նմա Յովսեպոս թէ հասանիցէ յաթոռ կայսրութեան, պահեաց զնա առ իւր սիրով։ Առան և այլ քաղաք Գալիլեացւոց մեծաւ աշխատութեամբ և արիւնհեղութեամբ, եւ մինչեւ ցկատարած ամին գրաւեցաւ ամենայն երկիրն յայնկոյս Յորդանանու։

Ընդ այն ժամանակս յԵրուսաղէմ կողմն Նախանձայուզաց բռնացեալ էր 'ի վերայ այլոց կողմանց, քանզի երկպառակեալ էին։ Նախանձայոյզքն բարբանօք որպէս թէ զԱստուծոյ փառն խնդրեն, չկամէին ընդ ուրուք իշխանութեամբ մտանել. այլ զամենայն իշխանութիւն օտար մերժել յանձանց։ Սոքա նախ աւարառութեամբ և սպանութեամբ մոլեգնէին 'ի վերայ հակառակորդացն 'ի մօտաւոր վայրսն Երուսաղէմի, եւ յետ այնորիկ առաջնորդու-